ԱՇԽԱՏԱՐԱՆ 16.03.2024 - 16.04.2024

«ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔԻ, ՀԱՐԱԿԻՑ ՊԱՏՄԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ»՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության օբյեկտ անվանակարգում ներառելու նպատակով

Աշխատարանն անցկացվում է ՃՇՀԱՀ-ի, ՌԵ-ՇԿՈԼԱՅԻ, Ecole de Chaillot-ի հետ համատեղ՝ 301 հիմնադրամի աջակցությամբ։

- Ո՞Վ ԿԱՐՈՂ Է ՄԱՍՆԱԿՑԵԼ

Մասնագետներ և ավարտական կուրսի ուսանողներ հետևյալ մասնագիտություններով՝ ճարտարապետություն, արվեստաբանություն, պատմագիտություն, սոցիոլոգիա, քաղաքագիտություն, մարդաբանություն, զբոսաշրջություն:

- ԱՇԽԱՏԱՆՔԻ ՆՊԱՏԱԿԸ

Սահմանել և ձևակերպել Տաթևի վանքի, հարակից պատմական տարածքների և բնակավայրերի՝ Հին Խոտ, Հին Հալիձոր, Հին Արժիս և Հին Շինուայր, պատմամշակութային արժեքավորման բնութագրերը։

Սահմանազատել Համաշխարհային ժառանգության օբյեկտի մաս կազմող տարածքները: Կազմել ճանապարհային քարտեզ և ձևակերպել տեղանքի/տարածքի նախնական գնահատում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության օբյեկտի անվանակարգում առաջադրվելու և փաստաթղթերի փաթեթ կազմելու համար:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

1995 թվականին Տաթևի վանքը և Տաթևի Անապատը, ինչպես նաև Որոտան գետի հովտի հարակից տարածքները Հայաստանի կողմից հայտարարվել են Համաշխարհային ժառանգության օբյեկտ: Այդ ժամանակվանից տարածքը գտնվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի նախնական ցանկում: Այս փաստաթղթում օբյեկտը նկարագրված է հետևյալ կերպ.

«ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔԸ գտնվում է Հայաստանի ամենամեծ կիրճի՝ Որոտանի բարձր լանջին, 850 մետր խորության վրա: Վանքի կառույցները երկու կողմից պաշտպանված են զառիթափ լանջերով, իսկ մյուս երկու կողմից՝ պաշտպանական պարիսպներով: Բուն Տաթևի կառույցները թվագրվում են իններորդից մինչև տասներեքերորդ դարեր, իսկ Տաթևի Անապատ վանքը, որը գտնվում է կիրճում, կառուցվել է տասնյոթերորդ դարում: Որոտանի հովտի այս տարածքն ունի նշանակալի երկրաբանական հետաքրքրություն»:

2022 թվականի գարնանից «Ռե–Շկոլա» կրթական նախագիծը 301 հիմնադրամի հետ համատեղ ուսումնասիրում է Սյունիքի մարզի այս վայրը: Մեր առաջին բացահայտումները չափազանց կարևորում են այս հնավայրը որպես Համաշխարհային ժառանգության օբյեկտ անվանակոչելու գործընթացը՝ հիմք ընդունելով ՅՈՒՆԵՍԿՕ-ի դրույթներն այս վայրի և Սյունիքի մարզի արժեքի ներկայիս ըմբռնման վրա:

ՍՅՈՒՆԻՔԸ Հայաստանի այն տարածքներից է, որ ունի հնագույն պատմություն, ինչի մասին են վկայում մի շարք հնագիտական գտածոները և պահպանված վայրերը, ինչպիսին է Քարահունջը: Հնագույն ժամանակներից այս տարածաշրջանով անցել են Ասիան և Եվրոպան կապող տարբեր

քաղաքակրթական և առևտրային ուղիներ, որոնք նպաստել են այստեղ բնակավայրերի, տնտեսության և ինքնատիպ մշակույթի զարգացմանը: Իններորդ դարում այստեղ հայտնվեց Տաթևի վանքը, որը 15-րդ դարում դարձավ տարածաշրջանի ամենամեծ քրիստոնեական և կրթական կենտրոններից մեկը, նրա ազդեցությունը բավականին ընդլայնվեց և դուրս եկավ Հայաստանի սահմաններից:

Որոտան գետի հովտում կան մի քանի պատմական բնակավայրեր, այդ թվում՝ Հին Խոտը, Հին Հալիձորը, Հին Հարժիսը և Հին Շինուայրը: Այս բնակավայրերն իրենց շրջակայքի հետ միասին կազմում են մեկ միասնական պատմամշակութային համալիր՝ ներկայացնելով նախաարդյունաբերական քաղաքաշինական հյուսվածքը: Դրանք պահպանվեցին, քանի որ 20-րդ դարի երկրորդ կեսին այդ բնակավայրերն ուղղակի լքվեցին: Դա հնարավորություն տվեց պահպանել ամբողջական տնտեսական և ճարտարապետական լանդշաֆտները՝ առանց արդյունաբերական դարաշրջանի տարրերի միջամտության:

Այս բնակավայրերը, սկսած 10-րդ դարից, դարձել են Տաթևի վանքի սեփականությունը, ինչը թույլ է տալիս խոսել մեկ համալիրի առկայության մասին՝ Տաթևի վանք - Տաթևի Անապատ - հովիտ - բնակավայրեր: Սա հնարավորություն է տալիս դիտարկել Օբյեկտը ավելի լայն սահմաններում, որը, իր հերթին, զգալիորեն հարստացնում և բազմապատկում է դրա արժեքը:

Ի՞նչ հնարավորություններ է բերում ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության օբյեկտի կարգավիճակը.

- Կոնվենցիայի մասնակից պետության և տեղի համայնքի հպարտությունը տեղանքով՝ որպես Աշխարհի ամենակարևոր բնական և մշակութային վայրերից մեկը.
- Տեղանքը հաճախ դառնում է ազգային պահպանվող տարածքների/տեղանքների համակարգի ստեղծման դրոշակակիր, ներառյալ համայնքային կյանքում մշակութային ժառանգության ավելի հստակ ըմբռնումը և ավելի արդյունավետ պաշտպանությունը.
- Համաշխարհային ժառանգության նկատմամբ միջազգային հետաքրքրությունը հաճախ խթան է ստեղծում միջազգային համագործակցության և գույքի պաշտպանությունն ապահովելու համատեղ ջանքերի համար.
- ֆինանսավորում և աջակցություն ներգրավելու հնարավորություններ՝ ներառյալ բարերարներ և Համաշխարհային ժառանգության հիմնադրամը.
- Կարող են ստեղծվել պաշտպանության, պահպանման և կառավարման մեթոդներ, ինչպես նաև գործելակերպ, որոնք կարող են կիրառվել ազգային և տեղական նշանակության ժառանգության վայրերում:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

- Հավաքագրել և վերլուծել պատմական, մատենագիտական նյութերը, տվյալները տարածքի և օբյեկտների վերաբերյալ.
- Փորձագետների, ճարտարապետների, սոցիոլոգների, մարդաբանների և պատմաբանների հետ համատեղ իրականացնել Տաթևի վանքի պատմական տարածքի մշակութային լանդշաֆտի բոլոր բաղադրիչների նախնական դաշտային ուսումնասիրություն և գույքագրում.
- Սահմանազատել Համաշխարհային ժառանգության օբյեկտը և դրա բուֆերային գոտիները, որոշել այդ տարածքների սահմաններում ընդգրկված օբյեկտների կազմը.

- Որոշել տարածքի և օբյեկտի հանրահռչակման համընդհանուր արժեքը ՀԺՕ չափանիշների համաձայն.
- Ձևակերպել և ներկայացնել հետազոտության կառուցվածքային արդյունքները.

Աշխատարանի ծրագիրը

16.03.2024 — 29.03.2024 Երևան

(հնարավոր է հեռավար ձևաչափ)

Փաստաթղթերի ուսումնասիրման աշխատանք,

Դասախոսություններ,

Դաշտային աշխատանքների նախապատրաստություն,

Նյութերի հավաքագրում։

30.03.2024 - 07.04.2024 Գորիս, Որոտանի հովիտ

Դաշտային աշխատանք,

Տարածքի, օբյեկտների ուսումնասիրություն։

07.04.2024 – 16.04.2024 Երևան

Հավաքագրված նյութերի ընդհանրացում, ամփոփում,

Հետազոտական աշխատանքների հիման վրա եզրակացությունների դուրս բերում,

Կատարված աշխատանքի հիման վրա հրապարակման նյութի պատրաստում։

ԻՆՉ ԵՆ ՍՏԱՆՈՒՄ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ.

- Պատմական տարածքի համապարփակ վերլուծություն կատարելու հմտություն.
- Տարածքի և օբյեկտների արժեքային բնութագրերի նույնականացման և որոշման մեթոդաբանություն.
- ՅՈՒՆԵՍԿՕ-ի Համաշխարհային ժառանգության օբյեկտների հետ աշխատանքի առանձնահատկությունների ըմբռնողություն.
- Միջազգային փորձագետների թիմի հետ աշխատելու հնարավորություն, ներառյալ Ֆրանսիայից.
- Ծրագրի ավարտական վկայագիր։

Մասնակիցներից պահանջվող փաստաթղթերը

- Լրացված հայտադիմում
- Պորտֆոլիո, հակիրճ կենսագրություն և հետաքրքրության նամակ (ուղարկել մինչև 24.02.2024)
- Հարցազրույց (նախնական փուլում ընտրված թեկնածուները պետք է անցնեն հարցազրույցը)

- Ներկայություն Հայաստանում (ֆիզիկապես գտնվել Հայաստանում 30.03.2024-ից մինչև 16.04.2024)
- Համակարգչի առկայություն
- Թիմային աշխատանքի հմտություններ
- Գրաֆիկական ծրագրերի իմացություն (Adobe InDesign, Photoshop, Illustrator)
- GIS (QGIS, ArcGIS) իմացություն

Պայմաններ:

- Մասնակցությունն անվճար է
- Մասնակիցներին վճարվում է Երևանից Գորիս և հակառակ ուղղությամբ տրանսպորտի, ինչպես նաև ուղևորության ընթացքում Գորիսի հյուրանոցում կեցության և նախաճաշի համար.
- Սեմինարի առաջին փուլին մասնակցությունը հնարավոր է հեռավար եղանակով
- 07.04.2024 – 16.04.2024 ընկած ժամանակահատվածում ուղևորությունը Երևան և կեցությունը Երևանում վճարում են մասնակիցները: